

## Հ. Ա. ԲԱՐԱԼՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ ԱՄՍԱՆՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՄՍՈՐԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց հին տոմարի ամիսների անունները հետևյալն են, և կամ տարվա առաջին ամսից՝ նավաարդի, հոռի, սահմի, տրե, քաղոց, արաց, մեմեկան, արեզ, աթեկան, մարերի, մարգաց, հողոտից և ավելեաց: Հայոց ամսանունները ունեն հետևյալ ստուգաբանությունը. նավաարդի՝ կազմված է «նոր» և «սարդ» բառերից՝ նոր տարի: (զենդերենով նշանակում է նոր և sareda՝ տարի): «Հին ժամանակ նավաարդը տունում էին մեծ համեկսով, որի հիշատակը մնացել է Արտաշես թագավորին վերագրած այս խորքերում՝ Ռ տարյ ինձ... զառաօտն նաւաարդի, զվագելն եղանց և զվարգելն եղչերուաց, Մեք փող հարուաք և թմբի հարկանեւաք»: Հոռի՝ տունի, այգեստանի ամիս: Հայոց տոմարի երկրորդ ամիսն է, համապատասխանում է սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը:

Այս ամսվա անվան ստուգաբանության վերաբերյալ գոյութուն ունեն տարրեր կարծիքներ. առաջին, ենթադրվում է, որ այս ամսվա անունը առաջացել է վրացերեն «օրի», այսինքն՝ «երկու» բառից, երկրորդ, այս ամսվա անվան ստուգաբանությունը ըստ միջնադարի վանական մականունվ հեղինակի առնչված է «նոր» բառի հետ, տարվա այն ժամանակի հետ, երբ մարդիկ իրենց հավաքած բերքը՝ ցորենը, գարին, գինին և այլն, ամբարում էին հորենի մեջ: Անա այդ առթիվ ինչ է գրել Վանականը իր «Յաղագ տարեմտին...» աշխատությունում. «Հոռի զի հորեն երկագործք և մշակը զցորենն և զգինը լրշտեմանն ժողովելով»<sup>1</sup>:

Սահմի՞—հայոց տոմարի երրորդ ամիսն է, համապատասխանում է հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 8-ը: Ենթադրվում է, որ այս ամսանունը կապված է վրացերեն «սարի»

(երեք) բառի հետ:

Հոռի և սամի ամիսների անունների ավելի հայկանական ստուգաբանությունը տվել է ակադեմիկոս Ստ. Մալխավյանցը: Նա գրում է, որ «Սահմի-ի, ինչպես և Հոռի-ի ստուգաբանությունները, իբրև փոխառություն վրացերեն օր, սամի բառերից անհավանական են: Վրացերենում օր, սամի ուղղական հունվեր են, այնինչ Հոռի, Սահմի անկանական հունվեր են, որոնք ենթադրել են տապիս Հոռ, Սահմ ուղղ. հունվեր: Օր, սամի հայերեն պետք է տային Որի, Սահմի, բայց ոչ Հոռի, Սահմի: Վրացերենում օր, սամի պարզ բառական անուններ են և նշանակում են «երկու», «երեք» և երեք չեն գործածվել իբրև ամիսներ նշանակող բառեր: Հայերը «երկու», «երեք» նշանակելու համար կարիք չեն ունենա փոխառության դիմելու, քանի որ այդ բառերն իրանց լեզվում գոյություն ունեն: Նկատի առնելով, որ հայկական մյուս ամիսների նշանակությունները կապված են տարվա եղանակների և այս եղանակներում տեղի ունեցող կենցաղական երևությունների հետ՝ հավանական են համարում, որ հոռի ամիսը նշանակելիս է եղել Ռուի ամիս, այսինքն որթատումկի՝ այգեստանի ամիս..., իսկ սահմի ամիս՝ Մերժանց ամիս...»<sup>2</sup>:

Տրե—այս բառը ստուգաբանվում է առընչված հեթանուական շրջանում հայերի կողմից պահուված գրի և արվեստների աստված Տիրի (Տիր) անկան հետո: Տիրը հայերի սիրած աստվածներից մեկն է եղել, հանդիսացել է Արամագի գրագիրը, և համապատասխանել է Մերկուրիոսին, հունական Ապոլոնին, եգիպտական Թոթին և այլն:

Հստ Ստ. Մալխավյանցի ստուգաբանության Տրե պահյալերեն նշանակում է Ծնիկ աստղ, պարսկական արեգակնային օրացուցի չորրորդ ամիսը: Այդ ամիսը համապատասխանում է հոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 8-ը:

Քաղոց—այս ամսանունը հայկական ծագում ունի, սակայն գոյություն ունի տարա-

<sup>1</sup> Լ. Խաչիկյան, «Յաղագ տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», Մատենադարամի գիտական հյուրերի ժողովածու, № 1, էջ 160, Երևան, 1941 թ.:

կարծիք ստուգաբանություն։ Ըստ Ք. Պատկանյանի առնչվում է «քաղել» բառի հետ, սակայն այս մենապոյտն ենթադրվում է, որ ճիշտ չէ, որովհետև հնագույն ժամանակներում քաղել բայց հնձելու նշանակություն չի ունեցել։

Ըստ Գրանսիացի բանասեր Ե. Դյուլորիեի կատարած ստուգաբանության, ենթադրվում է, որ քաղոցը առնչված է «քաղել» բայց հետ, որ հիշեցնում է հունձը, այսինքն՝ համբեկում է Ք. Պատկանյանի կարծիքի հետ։ Քաղոց ամիսը համապատասխանում է դեկտեմբերի 9-ից մինչև հունվարի 7-ը։

Ըստ ակադեմիկոս Հ. Աճառյանի ստուգաբանության. «Քաղոց» կազմված է «քաղ» (անասնոց խառնք) բառից, որ տարբեր չէ «քաղ» (նոյնազ, արո այժ) բառից։ Ըստ այս «քաղոց» նշանակում է «անասնոց», «խառնից ամիս», այսինքն՝ կապված է անասունների զուգավորման ամսի հետ։ Նման կարծիքի է նաև ակադեմիկոս Ստ. Մալյանյանը։ Նա գրում է. «Քաղոց (քացից, այսինքն անասունների զուգավորության ամսի) ... գործ է ածխած և իբրև սեռ։ Իոլով, և իբրև ուղի, սեռ. քաղոցից՝ Ուսանք բարը համարում են քաղեց՝ հնձեց, ինչպես ժողովրդական քաղոցը քաղելու ամիսը, սակայն ուղիով չէ այս ստուգաբանությունը, որովհետև հինգ լեզվում «քաղել» բայց հնձելու նշանակություն չուներ և ոչ էլ քաղ՝ հունձ»<sup>4</sup>։

**Սրաց**—կարելի է ասել դեռևս մյուս ամսանունների նման ստուգաբանված չէ։ Սակայն Վանականի մոտ արաց-ի փոխարեն գրված է արաց և ստուգաբանում է հետեւյալ կերպ՝ «Եւ Սրանց ի յանել ձեան զերինս և զբուրս, առեն արանց է այս ճանապարհ և ոչ կանանց։ արի մարդոց է այս և ոչ թուղից և վատաց»<sup>5</sup>։ Արացը սկսվում է հունվարի 8-ից մինչև փետրվարի 6-ը։ Հովհաննես իմաստանության նոյնական «արացի» փոխարեն գործ է «արանց» ձևով։

**Մեհեկան**—այս ամիսը գործածվել է նախ «Մեհեկի» ձևով։ Մեհեկան անունը առնձնված է պարսկական Միհր արեգակի աստծու անվան հետ, որը մեծ հոչակ էր վակելում նաև հայերի մոտ։

Հին պարսիկների մոտ ևս Միհր—մեհե-

<sup>2</sup> Ստ. Մալյանյանց, «Հայերն բացատրական բարան», 4-րդ հատոր, էջ 176։

<sup>3</sup> Հ. Աճառյան, Արմաստական բառարան։

<sup>4</sup> Լ. Խաչիկյան, «Յաղաց տարեմտին ի Վանական վարդապետի ասացել», Մատենադարանի գիտ. հյութերի ժողովածու № 1, Երևան, 1941, էջ 160։

<sup>5</sup> Ստ. Մալյանյանց, Հայերն բացատրական բարան, Երևան, 1945, էջ 589։

կանը օրացույցի 7-րդ ամիսն է, երբ մեծ տոն էր կատարվում Միհր աստծու պատվին։ Մեհեկանի 1-ը համապատասխանում է փետրվարի 7-ին, իսկ 30-ը՝ մարտի 8-ին (հասարակ տարի)։

Նոկ Վանականը տվել է հակառակ բացատրություն, որ «Մեհեկի զի տոնեկը և բոյսը որպէս զմեռեալ լինին՝ եղեննապատ և ձինաթառ»։ Մեհեկի պահեքը ածին»<sup>6</sup>։

Վանականի բացատրությունն ավելի հավանական է, որովհետև այդ ամսին իրոք որ բնությունը, բոյսերը, ծառերը մեռյալ վիճակ են ունենում։

**Արեգ**—առաջացել է «արեգակ» բառից, այսինքն՝ «Արեգ»—«արեգակ» բառի արմատըն է, Արեգը եղել է հայերի հնագույն ցեղական աստվածը։ Ըստ Վանականի Արեգ անունը նոյնական կապված է արեգակի հետ, որ այդ ամսին արեգակի գործությամբ արթնանում է բնությունը։

**Մեհեկան**—ըստ Ք. Պատկանյանի, Մեհեկան ամսվա անունը կապված է կրակայն, հրային նշանակություն ունեցող բառերի հետ, հավանաբար նշան ստուգաբանությունը կապված է տարվա եղանակների ժամանակի, գարնան զարթոնքի հետ, որը համապատասխանում է ապրիլ, մայիս ամիսներին։

**Մարերի**—պահլավերենում սրան համապատասխանում է «ազարական» և նշանակում է տարեմեջ, այսինքն՝ տարվա հինգերորդ ամիսը։ Ըստ Վանականի ստուգաբանության մարերի անունը առնչված է պնտառերի տերևածածկման հասկացողության հետ, երբ այսպես կոչված մայրիք ծառերը կանաչում են ու տերևակալում։ Վանականը գրում է. որ «Մարերի, որպէս թէ բարական մայրիք տերևուկը և սոսաքը և լինին մայր թռչնոց և զագանաց»։ Այս բացատրությունը ժամանակի տեսակետից բավարարում է, որովհետև Մարերին համապատասխանում է մայիս հունիս ամիսներին։ Գրեթե նման բացատրությունը է տալիս Ք. Պատկանյանը, ըստ երևույթին նաև հիմնվել է Վանականի բացատրության վրա։

**Մարգաց**—ըստ Ստ. Մալյանյանի ստուգաբանության նշանակում է թռչունների թխսի ամսին։ Ըստ Ք. Պատկանյանի՝ կապված է «մարգ» բառի, այսինքն՝ խոտիարքի և խոտիունների հասկացողության հետ։ Նման կարծիքի է նաև Դյուլորիեն։ Մարգաց ամիսը սկսվում է հունիս ամսում և վերջանում հոլիսին։ Վերջին բացատրությունը մեր

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 160։

կարծիքով համանաբար ստուգաբանել է նոյնական Վանականը, որը տվել է հետեւյալ բացատրությունը. «Ըսկ Մարգար, որ է ժամանակ ածելոյ զմարգ, որ ի դաշտու ի բուրաստան...»<sup>7</sup>:

Մարգարը համապատասխանում է հունիսի 7-ից մինչև հուլիսի 6-ը (հասարակ տարիների դեպքում):

**Հրոտից—ըստ Ք. Պատկանյանի ստուգաբանության՝ հրոտից անոնը առաջացել է «հոր» բաժից:**

Այսպիսի բացատրության ճշմարիտ, իրական լինելը լավագույն վեր է, որովհետու տարվա տվյալ ժամանակում լինում է չափազանց շոգ: Նոյն կարծիքին են նաև այլ հեղինակներ:

Ինչպես, օրինակ՝ Վանականը գեղեցիկ ձևով է ստուգաբանել հրոտից ամսվա անոնը. նա գրել է. «Հրոտից՝ ըստ գրութեան ի, զի հոր է ոտիցն որ այրէ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգական»<sup>8</sup>: Այս ամիսը ընկնում է հուլիս, օգոստոս ամիսների մեջ, հունիսի 7-ից մինչև օգոստոսի 5-ը:

**Ավելեաց—հանդիսանում է 13-րդ լուսուցից ամիսը, որը պարունակում է հինգ օր հասարակ տարիներում և 6 օր՝ համանջ տարիներում (անշարժ տոմարի դեպքում): Ավելեաց օրերը համապատասխանում է օգոստոսի 2-ից մինչև օգոստոսի 10-ին:**

Այստեղ բերված Վանականի ստուգաբանությունները պետք է դիտել որպես ալիքնություն՝ կապված ժողովրդական իմաստավորման հետ:

Հայոց հին տոմարը հաշմակալի է նրանով, որ բացի ամսանուններից, անուններ են ունեցել նաև ամսվա լուրաքանչյուր օրը և օրվա լուրաքանչյուր ժամը:

Հայոց հին տոմարի ամսօրերի անունները հետևյալներն են.

- |            |             |
|------------|-------------|
| 1. Արեգ    | 8. Միհր     |
| 2. Հրանտ   | 9. Զոպարեր  |
| 3. Արամ    | 10. Մուրց   |
| 4. Մարգար  | 11. Երիգլան |
| 5. Անրանք  | 12. Անի     |
| 6. Մաղթեզն | 13. Պարիսար |
| 7. Աստղիկ  | 14. Վանատոր |

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 160:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 160:

Ժամանքություն.՝ Այստեղ բերված հայոց հին տոմարի ամսանունների ստուգաբանությունները հիմնականում բաղկան ենք ակադեմիկոս Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ից, ակադեմիկոս Ստ. Մահմադյանի բացատրական բառարանից, Միջնադարի Վանականի (Հպիսանեն վարդապետի) «Յաղագ տարեմտին ի վանական վարդապետէ ասացեալ» աշխատությունից և այլ աղյուրներից:

- |              |               |
|--------------|---------------|
| 15. Արտամազդ | 23. Ծմակ      |
| 16. Մանի     | 24. Լուսնակ   |
| 17. Ասակ     | 25. Ցրոն      |
| 18. Մասիս    | 26. Նպաս      |
| 19. Անանիտ   | 27. Վահագն    |
| 20. Արագած   | 28. Սին       |
| 21. Գրգոր    | 29. Վարագ     |
| 22. Կորդոնիք | 30. Գիշերավար |

Այստեղ հարկ է նշել, որ որոշ հեղինակներ ամսվա օրանուններից մի քանիսը հիշու չեն գրում, օրինակ «Երիգլան»-ի փոխարեն գրում են «Երազական», «Սին»-ի փոխարեն՝ «Սիհն», «Վարագ»-ի փոխարեն՝ «Վարագ»:

Ամսօրերի անունները հայկական ծագում ունեն և առնչված են սրբացված կողմերի, մեհյանների տեղանունների ու հեթանոսական հայկական աստվածների և աստվածուների անունների հետ: Ավելեաց ամսվա հինգ օրերը կույլ են այն ժամանակ հայտնի հինգ մողրակների անունները: Մերկուրի (Փալյածու), Վեներա (Արուպակ), Մարս (Հրաս), Յայիսիտեր (Ուսընթագ) և Սատուր (Երեկակ):

Ինչպես հայոց տոմարի ամիսների, այսպես է ամսօրերի վերոհիշյալ անունները հայունի են եղել մեր թվականություններց առաջ՝ հեթանոսական շրջանում: Բացի հայոց տոմարից, ամսվա օրերն առանձին անուններ են ունեցել պարսկական հին օրացուցում և կենտրոնական Ամերիկայում ապրող ժողովրդների մոտ, ասկան, իրարից միանգամայն տարբեր անուններ:

Այս անունները ամենայն հավանականությամբ հայկական ծագում ունեն և հիմնականում կարիք են հայկական հաշմանդուր պարագան լեռների, աստվածների, աստվածուների և հրանց մեհյանների վայրերի անվան հետ, որոնք հանդիսացել են ժողովրդական պաշտամունքի վայրեր: Ակադեմիկոս Ս. Եղիշևանը ծանոթաթաղով այս անուններին, այն կարծիքը հայտնեց, որ այս անունները, տեղադրելով հաղոց հին բարտեզի վրա, բացառությամբ մի քանիսի, միանգամայն համապատասխանում են դեռևս հեթանոսական շրջանի պաշտամունքի հաշմանդուր վայրերի հետ: Այսպիսի մոտեցմամբ ամիսների օրանունների ստուգաբանությունը բացատրելու միանգամայն բնական է: Դա հայկանական է նաև այն տեսակետից, որ դեռ մեր օրերում նոյնական որոշ սրբավայրեր այցելությունն են կատարում ամեն տարի տիտա ամսի միևնույն օրը:

Սակայն մի քանի անուններ, ինչպիսիք են Հրանտ (2), Մարգար (3), Անրան (5), Զոպարեր (9), Ասակ (17), Ծմակ (23) և Ցրոն (25), որոնց վերաբերյալ դեռևս

իմաստալից ստուգարանություն մեզ հայտնի չէ: Այդ անունները որոշ հեղինակների կողմից փորձ է արված ստուգարաներ, սակայն որպես անսկա օրերի անունների ստուգարանություն բավարար չէ և մեռում է դեռևս բաց: Այս անունների ստուգարանություններ արժանի է առանձին հետազոտության: Նրանք հավանաբար կարող են նույնական կապված լինել պաշտամունքի հետ: Մասցած 23 օրերի անունների հավանական ստուգարանությունը բերված է ստորև:

1. Արեգ—տես հայոց ստոմարի արեգ ամպվա ստուգարանությունը:

2. Արամ—ըստ ակադեմիկոս Հ. Աճառյանի ստուգարանվում է հետևյալ կերպ. «Արամ—խաղիների Արամն թագավորի անունից: Սա իշխում էր Ն. Ք. 860—843 թթ. կազմեց Ուրարտյան մեծ դաշնակցությունը և իր ամբողջ կյանքում կովկաց Ասորեստանց պետության դեմ՝ քաջությամբ վանելով հզոր Սալմանասարի բոլոր հարձակությունները: Նրա հիշատակը ավանդաբար մնացել է հայ ժողովրդի մեջ, որից և քաղելով Խորենացին կազմեց Հայկազնց Արամ համապետի պատմություն... Արամի անունով օտարեները կոչել են մեզ Արմեն, իսկ մեր երկիրը՝ Արմենիա: Ըստ Զամշյանի, Արամը իշխել է Ն. Ք. 1827—1860 թթ.»<sup>9</sup>:

6. Մազդեկ կամ Մազդեն—կարող է առաջացած լինի պահիվերեն «mazdesen» բառից, որը հշանակում է Ահուրա—Մազդային: Ահուրա—Մազդը հին պարսկական գրլիսավոր աստվածն էր, որ մոտավորապես համապատասխանում էր հայոց Արամազդին, հունական Զևսին և հոռմետական Յուպիտերին: Մազդեզականությունը հշանակում է պարսկական գրադաշտուական կրոն:

Բառացի մազդեկ—կամ մազդել հշանակում է գիտակ, իմաստուն, պարսկական կրոնի ուսուցիչ, վարդապետ:

7. Աստղիկ<sup>10</sup>—այս անունը կապված է հայոց Աստղիկ դիցություն անվան հետ:

**Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942:**

<sup>10</sup> Աստղիկը համարվում էր գեղեցկության և միրու աստվածութին, Արամազդի դուստը և և համապատասխանում էր հունական Աֆրոդիտին և հոռմետական Վեներային: Աֆրոդիտեն Զևսի դուստը էր, իսկ Վեներան՝ Յուպիտերի, Աստղիկը եղել է հայոց ուժի և քաջության աստծո՛ Վահագմի կինը: Աստղիկ դիցությունը պաշտամունքի համար Հայաստանում կառուցվել է մի շարք մեմյաններ, որոնցից երկուսը Տարոնի գավառում: Այս երկուսից մեկը գտնվել է Աշոտիշատ ավանում, որտեղ գտնվել է նաև Վահագմի մեհյանը: Նրա մեհյաններից մեկը Տարոնում կոչվել է Վա-

8. Միհր<sup>11</sup>—կապված է Միհր՝ կրակի սաստու պաշտամունքի հետ, որը մեծ հոչակ էր վայելում նաև հայերի մոտ:

10. Մուրց—հավանաբար մրցություն բաղի է առաջացել առնչված մրցախաղերի հետ (տես Հ. Աճառյան, Արտաստական բառարան, հատ. 4, էջ 118):

11. Երեզլիան—կապվում է Աճառյանի պաշտամունքի հետ, որի գլխավոր տաճարը՝ մեհյանը, գտնվում է Երիզա (այժմկան Երզընիկ քաղաքում) Աճառյանի կամ Եկեղեցաց գավառում:

12. Աճի—առնչված է Կամախի Դարանայակի գավառում կառուցված Աճի ամրոցի անվան հետ, որտեղ գտնվում է Արամազդ աստծու գլխավոր տաճարը:

13. Պարխար—ծագել է հայկական Պարխար լեռան անունից, այդ լեռնաշղթայից փշող ցուրտ հյուսիսային քամին նոյնական կոչվում էր պարխարական քամիներ:

14. Վանատոր—ամսվա 14-րդ օրվա այս անունը հավանաբար առնչված է ամանորի հետ, որովհետև Ամանոր անվանը գուգած է և Վանատորը<sup>12</sup>:

Բագմի սենյակ: Աստղիկ դիցություն պաշտամունքի տոնը կատարել են մեծ հանիսավալորությամբ, որը ժողովուի մեջ պահպանվել է մինչև մեր օրերը, որպես Վարդապատի տոն: Վարդապատի տոնի օրը շուրջ են ցանում իրար վրա, որ տեղի է ունենում հայոց հավաար ամիս Ակրեմներին: Դիցություն պաշտամունքին նկրիված տոնը վարդապատ է կոչվում այն բանի համար, որ Աստղիկ դիցությունը որպես ընծան նկրիր են վար: Այս այժմիվ հետաքրքրական է ակադեմիկոս Մ. Արենյանի մեջքերումը. «Է կոչեցին զնա վարդապատն և սուեծի, և զվարդն, նման մասուցանեհն. վասն պատրիկ անվանեին զնօնս զայս վարդապատ» (Մ. Արենյան, «Վիշապներ», Երևան, 1941, էջ 77):

<sup>11</sup> Նշանակում է հայոց մենեկի ամսի 8-ը հանդիսացի է Միհր աստծու պաշտամունքի տոնակատարության օրը: Հայոց Միհր աստղածը Արամազդի որդին է, որին իրանում համապատասխանում է Միթրան, Հոռոմում՝ Վոլվանը, Հնեկասամում՝ Սգեմին, այս երկրներում նոյնական եղի կրակի պաշտամունքի աստղածները: Միհր աստծու համար կառուցված տաճարը՝ Միթրանը, գտնվել է Բագատիճ ավանում, որը գտնվում էր Դեղձան գավառում:

<sup>12</sup> Նշանակում է՝ հայոց մենեկի ամսի 8-ը հանդիսական ծննդ. «Այս բառատորությամբ Ամանորի տոնակատարության ծննդանակ է Աստղատակ աստղատակի համապատասխան կողմերից Բագավան հավապատ կառուցվում էր Բյուրանց կառուցել և տոնի մասնակիցներին կերպերել Ամանորին. մատուցած զոմերով: Դրա հետևանքով ժողովուրդը Ամանորին անվանեց Վանատորը, որ նշանակում է հյուր-

15. Արտամագդ—առնչված է հին հայոց աստված, աստվածներից մեծագույնը և հայր՝ Արամագդի անվան հետ<sup>13</sup>:

16. Մանի—հայկանարար կապված է Մանի աստվածության հետ, որի մեջիանը պետք է գտնվեր Թորդան գյուղի մոտ, իսկ ըստ Քաջունու առնչված է Մանի լեռան անվան հետ:

18. Մասիս—առնչված է Մասիս լեռան անվան հետ:

19. Անահիտ<sup>14</sup>—ամսվա այս օրը առնչված է հայոց դիցութիւն Անահիտի անվան հետ: Անահիտ դիցութիւն համապատասխանում է հունական Արտեմիսի դիցութիւն, հոռմեալիան Դիանա աստվածութուն և այլն:

20. Արագած—առնչված է Արագած լեռան անվան հետ:

21. Գրգոր—հայկական լեռան անուն է:

22. Կորդոփր—կապված է Կորդոփր լեռան անվան հետ:

24. Լուսնակ—կապված է լուսնի անվան հետ:

26. Նպատ—հայկական լեռան անուն է:

ընկալ» (Ա. Սուպերսան, «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», էջ 89, Երևան, 1959):

<sup>13</sup> Հայոց Արամագդը իր կրոնական և տիեզերական ֆունկցիաներով համապատասխանում էր պարսկական Անտորամագդային, հունական Զևսին և հոռմեալիան Յուպիտերին: Նա պարզուում էր երկրին լիովիտուն: Հայերի համար Արամագդն այնքան նշանավոր ու պաշտելի աստված է եղել, որ նրա անվամբ կառուցվել են շատ բազիները (ներառութական գործ սեղան կամ տաճար), որոնց տեղերը հայտնի չեն. Միայն հայտնի է, որ Արամագդի գլխավոր բազինը գտնվում էր Դարանաշաց գալաքի Անի ամրոցում (Երզնկայի մոտ), որը հանդիսացել է պաշտամունքի վայր: (Քաջունի, «Բագդիք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեան», էջ 101, Վանետիկ, 1892):

<sup>14</sup> Բացի Հայերից, որպես դիցութիւն Անահիտին պաշտել են նաև ուրիշ շատ ժողովորդներ: Նա եղել է Արամագդի դուստրը: Հայերի համար հանդիսացել է շահազանց սիրված ու պաշտված դիցութիւն և համարվել է ամենայն զգացության մայր: Անահիտ դիցութիւնը համար Հայաստանում կառուցվել են մի քանի մերժան և արձանները: Նրա արձաններին տվել են Բնիտելյալ անունները՝ Ուկեմայր, Ուկեման, Ուկեմին և այլն: Անահիտի համար կառուցված առաջին մերժանը գտնվել է Երիգան ավանում (Երզնկան), որը հանդիսացել է նաև ժողովրդի նշանավոր պաշտամունքը և գայրերից մեկը: Երկրորդ մերժանը գտնվել է Արտաշատուն և Երրորդ՝ Աշտիշատի ամսնում (Տարոնի զավակում):

27. Վահագն<sup>15</sup>—առնչված է հին հայոց դիցության մեջ պատկերած ուժի և քաջության աստված Վահագնի անվան հետ:

28. Սին—լեռան անուն է:

29. Վարագ—լեռան անուն է:

30. Գիշերավար—գիշերով ընթացող, գիշերը համապարհորդող, առնչված է Արույալակ—Վեներա մոլորակի հետ: Արույալակ մոլորակը տարվա վեց ամսում կոչվել է գիշերավար, որովհետև մոտ այդքան ժամանակ կրան կարելի է տեսնել գիշերը (արևմտաքում երեկոյան, և արևելքում՝ առավտյան կողմը, այլ կերպ ասած՝ արեգակից հետո և առաջ), իսկ տարվա մեջացած ժամանակում կոչվել է Արույալակ (տես «Հայկագեան լեզի» բառարանը):

Հայոց տոմարի ավելեաց ամսի հինգ օրեար նույնական շատ հին ծագում ունեն, որոնց անվանել են հնուց հայտնի հինգ մոլորակ—ների՝ Փալլածուի, Արույալի, Հրանտի, Լուսնթագի և Երևակի անուններով:

Ցանկալի է, որ հայագետները ավելի համագաներքեն լուսաբանեն ինչպես ամըսվա օրանունների, այնպես էլ ամսանունների ստուգաբանությունը:

Հայոց հին տոմարի ամսօրերին առանձինառանձին անուններ տալու փաստը վկայում է այն մասին, որ ամսօրերին անուններ տա-

<sup>15</sup> Նա հանդիսացել է բազություն պարզելող աստված, այդ առթիվ ավելորդ չենք համարում քերել հայ մատենագրությունից Սգագարանգուստի երկտողը «Քաջութիւն հասցէ ծեզ ի բաշէն Վահագնէ ամենայն հայոց աշխարհին»: (Ագաթանգելայ «Պատմություն հայոց», էջ 78, Ծիփիս, 1914):

Հայոց Տրդատ թագավորն այդպես է մաղթել քաջություն բազաց Վահագնից իր ժողովրդին: Վահագնի բազության վերաբերյալ նետարքքրական է նաև մեզ հասած Անահիտա Ծիրակացու պատկերած աստվածելը, ըստ որի Վահագնը երկնքում կովել է ասրաց Բարշամ թագավորի հետ ու նրանից փախցող հարդը և երկնքով տեղափոխելիս համապարհին այն թափում է ու առաջացնում Ծիր Կաթինը, որին ժողովուրդը, որպես առասպել, անվանում է «Հարդագողի ճանապարհ»: Ըստ Ղ. Ալիշանի, Վահագնի պաշտամունքը կապվում է նաև արեգակի պաշտամունքի հետ, այդ կապակցությամբ նա գործ է: «Ոմանք զԱրեգակն պաշտոնցին և Վահագն կոչեցին» (Ղ. Ալիշան, «Հին հայաստք...», էջ 96, 1910): Գոյություն ունի նաև այն կարծիքը, որ Վահագնը համարվել է ամսդրապային աստված:

Վահագնի համար կառուցված մեջյանը գտնվել է Աշտիշատ ավանում (Տարոնի զավակ), որը հանդիսացել է պաշտամունքի վայր և հայկանարար պաշտամունքի տոն օրը եղել է հայոց հին ամսաներից մեջի 27-ը, Ավելիք Վահագն աստծո պաշտամունքին:

լու ժամանակաշրջանում հայերի մոտ, ըստ երևոյթին, ստվորություն չի եղել յոթնօրյա շաբաթվա գործածություն:

Ըստ երևոյթին, ամսօրերի միջոցով հաշիվներ կատարելու ավելի ոյուրին դարձնելու նպատակով են ամսօրերին տվել առանձին անուններ: Այսուելից կարելի է կոսմիկ, որ հավանաբար հայերի մոտ ամսվա 30 օրերին առանձին անուններ տպու գործածությունն ավելի հին ծագում ունի, քան յոթնօրյա շաբաթվա կիրառությունը:

Նման կարծիք գոյություն ունի նաև պարսկական ամսօրերը առանձին անուններով կոչելու վերաբերյալ:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև Ազարիա Չուղայեցու բարեփոխած սումարի ամսանունների ստուգաբանության շուրջը:

Ծամս—արարական քառ է, ճշանակում է Արեգակ:

Սահամ—հավանաբար նախամարդու անունն է ըստ Աստվածաշնչի, որով կոչվել է Ազարիա Չուղայեցու սումարի երկորդ ամիսը:

Ղամար—արարերեն ճշանակում է Լուսին:

Համիրայ—կամ համերայ—հավանաբար արարերեն Ամիր քառից է առաջացել:

Արամ—տես ամնվա 3-րդ օրվա ստուգաբանությունը:

Մնացած ամիսների Ծրայթ, Նախայ, Նադար, Ովդան և Նիրիան անունների ստուգաբանությունը մեզ հայտնի չէ:

Անհրաժեշտ է արձանագրել նաև այն հետաքրքրական փաստը, որ 1870 թվականի սկզբներում Ն. Ռուսինյանը փորձ է արել փոխել ամսանունները: Նրա կողմից առաջարկված ամիսների նոր անունները հիմնականում առնչված են տարվա եղանակների ժամանակի փոփոխությունների հետ:

Այլ անունները, սկսած տարվա սկզբից, հերթականությամբ հետևյալն են:

1. Սառներ—սառնաբեր ամիս,
2. Մրկեր—մրոկաբեր ամիս,
3. Զարթին—վարդային ամիս
4. Մաղկին—ծաղկային ամիս
5. Մարգին—մարգային ամիս
6. Հնձար—հնձի ամիս,
7. Տոթար—տոթարար ամիս
8. Մրգար—մրգարար ամիս,
9. Կթոն—այգեկութիւ ամիս,
10. Թառմոն—թառումության ամիս,
11. Միգոն—միգամածության ամիս,
12. Զյուներ—ձյունաբեր ամիս:

Այս ամսանունները չստիագանց լավ կերպով են առնչված տարվա տվյալ ժամանակում կատարվող աշխատանքների և օդերևության արարական երևույթների հետ: Սակայն, հավանաբար կանքում գործնական կիրառության բնավ չեն արժանացել: Անտարկուս ն. Ռուսինյանի ստացարկած ամսանուններն ավելի բնական ու հարմար են եղել, քան ներկայումս գործածվող հումետական օրացուցի ամսանունները:

### Օրվա ժամանակները

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ հայերը շատ վաղ ժամանակից օրվա 24 ժամերին տվել են առանձին անուններ, որից 12-ը համարելով ցերեկվա ժամեր և 12-ը՝ գիշերվա<sup>16</sup>:

Օրվա ժամանունները համապատասխանում են Արեգակի տեսանելի շարժման դիրքի ընթացքին:

Ցերեկվա ժամանուններն են

1. Այգ
2. Ծայդ
3. Զօրացեալ
4. Ծառագայթեալ
5. Ծառադիեալ
6. Երկրատես
7. Ծանթարկող
8. Հրակաթ
9. Հորափայլեալ (հուրաթափեալ)
10. Թաղանթեալ
11. Արագոտն
12. Արփող

Գիշերվա ժամանուններն են

1. Խաւարակ
2. Աղջամուղջ
3. Մթացեալ
4. Ծաղատու
5. Կամատու
6. Բաւական
7. Խորթափեալ (խաւաթափեալ)
8. Գիզակ
9. Լուսական
10. Առատու
11. Լուսափայլ
12. Փայլածու

<sup>16</sup> Ներկա աշխատությունում բերված օրվա ժամանունները քանի ենք Դ. Ալիշանի «Հին հաւատք...» աշխատությունից, Վենետիկ, 1910: